ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4027-Ա « 02 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի Հ.2357-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.09.2025թ. հ.20-Ել-58067 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացիներ Ջեմմա Վարոսյանի և Սվետլանա Պողոսյանի 07.08.2023թ. հ.Դ-96057-23 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2016 թվականի հունիսի 28-ի «Երևանի Դոդոխյան փողոցի հ.26/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Ջեմմա Հայկի Վարոսյանի, Սվետլանա Պողոսի Պողոսյանի իրավունքները վերականգնելու, 177.74քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2357-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «477.74քմ» բառը փոխարինել «466.29քմ» բառով.

2) Որոշման վերնագրում և 2-րդ կետում՝ «177.74քմ» բառը փոխարինել «166.29քմ» բառով.

3) Որոշման 3-րդ կետում՝ «քաղաքապետի խորհրդական Հ.Մուրադյանին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ